



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>





# ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՈՅ


ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅԱ.ՌԱ.ԶԱ.ԲԱ.ՆԻՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՄԸ

ՈՒՍՈՒՄՆԱՑԻՐԵՑ

Հ. ԼԵՈՆ Ա. ՓՃԵԱՆ


Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԵ



ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1916



# ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՈՅ

## ՅԱՌԱՋԱԲԱՆԻՆ

### ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՄԸ

Փարպեցոյ «յառաջարանին» առաջարկած նոր ընթերցմանն դասաւորութեան ժամանակ, առջևս ունէի իրրե բնագիր Գ. Տէր-Մկրտչեանի և Ս. Մալխասեանի ըրած վերջին հրատարակութիւնը (Տփղիս, 1904):

Այս յարգելի երկու բանասէրները ինչպէս որ կ'ըսեն զրգին 7երորդ էջին ծանօթութեան մէջ, ընդունած են Նորայրի կատարած դասաւորութիւնը՝ որ ի Լումայ գրական հանդէսին 1896 տարւոյն թզրգին 309-319 էջերուն մէջ, և անոր դրած չորս քննիատուրիւններէն (lacunes) մին միայն ընդունելով.... «Մենք հետեւեցինք Նորայր Բիշզանդացու առաջարկած դասաւորութեան որ առ այժմ ամենից հաւանականն է և յաջողը: Ն. Բ. այս յառաջարանում չորս տեղում պակասորդ է գրա-

Առում : Մենք անպայման պակասորդ ենք  
նկատում միայն երրորդ տեղում, ինչպէս  
բացատրած ենք ծանօթութեան մէջ» :

**Մեծ.** Նորայր յառաջարանին դասաւո-  
րութիւնը կատարելէն վերջ, խօսելով Վե-  
նետիկի Մխիթարեանց Ղազար Փարպեցւոյ  
պատմութեան երեց տպագրութիւններուն  
վրայ, զանց չըներ հեգնել մասնաւորապէս  
Գ տպագրութիւնը. (Լումա էջ 316) . . .  
«Երրորդ տպագրութեան կարևորութիւնը յոյժ  
մնձ և, քանզի բնագրին այլայլութեանցն և  
խանգարմանց չափ չի կայ, սկսեալ ի յա-  
ռաջարանեն» : Եւ այս բացառութեան պա-  
կասութիւնը, անշուշտ, որովհետև մեծ տար-  
բերութիւն մը կար իր և Գ տպագրու-  
թեան հրատարակած յառաջարաններու դա-  
սաւորութեանց մէջ և կամ, զոր չեմ կար-  
ծեր, Նորայր ուզած ըլլայ հերքել Ե .  
Մատաթեանի Բ. տպագրութեան<sup>1</sup> առթիւ  
ըրած գովեստը «Այդ գործով (ձեռագիր-  
ները ուղղելու) զբաղուել են մեր մէջ մա-  
նաւանդ Վենետիկի Մխիթարեան վարդա-  
պետենրը, որոնց չանքին պարտական ենք  
ի միջի այլոց Ղազարի վերջին տպագրի մէջ  
մտցրած բարեփոխութիւնները » . (Հանդէս

Ամսօրեայ 1887 էջ 166): Ասկայն ի սէր ճշմարտութեան ըսենք որ Գ. տպագրութեան դասաւորութիւնը կը գերազանցէ Նախորդը, և իրու արդիւնք՝ կրնայ համեմատուիլ մինչև իւր օրերը առաջարկուած ամէն նոր ընթերցման հետ, և եթէ Ե. Մատաթեանի, Բ. տպագրութեան առթիւ, առաջարկած քանի մը դասաւորութիւնները ընդունէր, անպայման նա գերազանցութիւնը պիտի ունենար բոլոր երեցածներուն վրայ:

Արդէն Տփղիսի հրատարակութիւնը արդարութեան պարտը մը կը հատուցանէ երբ կ'ըսէ. «Երրորդ տպագրութիւնը, բացառութեամբ Պատմութեան Առաջարանի մէջ աղաւադուած հատուածների բաւական յաջող դասաւորութեան.....» (Էջ Դ. սիւն Բ. տող 12-14):

Սուբիաս Վ. Պարոնեան Բանասէր Հանդէսին մէջ (1899 էջ 267) փորձած է նոր ընթերցում մը: Իւր ուսումնասիրութեան

1. Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան ևս համակարծիք է ինծ այս մասին: Բազմմավէպի 1904 տարւոյն 52-63 և 129-133 էջերուն մէջ յետ հմտարար գրչագիրներու բաղդատութեամբ քննադատելու Տփղիսի հրատարակութիւնը, կը մերժէ Նորայր Բուզանդացւոյ ենթադրած չորս ընդհատութիւնները:

ընթացքին (էջ 268) այն եզրակացութեան կը յանգի «որ Փարպեցոյ յատաջարանդ, ցաւաշի և բաել ամրողչ չէ, տեղափոխուրիւններէ զատ՝ կրած և նաև կորուստ մը բաւական ընդարձակ։ Անվեսս պահուստ են անոր սկզբնական և վերջնական մասերը, և այդ երկու մասանց մեջն է դատարկուրիւնը։ սակայն բաց ի այդ երկու մասերեն, կը գտնուին նաև բանի մը անկցորդելի մասն հատուածիկ, որ անշոշտ կորուսեալ մասին կը պատկանին, զորս կորուսեալ բդրոց քեկորներուն վրայ գտնելով խղճաւոր ընդօրինակողը զանց չէ ըրած իսր խանափեղորիւնալ կոյտին մեջ մեկ մեկ խորշ նոցա և չեռիել՝ բատ պատահման»։

Պարոննեան կը համարի յաղթութեան դրօշը խլել Նորայրի ձեռքէն երբ համեստաբար կ'առաջարկէ Մխիթարեան Հարց՝ որ եթէ «արժան համարին իրենց նոր տրպագրութեան մեջ զայս մեր ուղղուրիւն և ընդունել, պիտի համարձակիմք խնդրել որ զայդ նոր տպացրուրիւնն ուրածալ հրատարակուի իբր հատորակից «Նախնեաց Մատենագրութեան»։

Նոր տպագրութիւնը կատարուեցաւ ոչի Վենետիկ այլ Տփղիս, և Պարոննեանի փափացին՝ արժանացաւ Նորայր։

Իսկ ես իմ կարգին բանասէրներուն՝

Կ'առաջարկեմ Յառաջարանին նոր դասաւորութիւն մը:

Իմ եզրակացութիւնը այն եղաւ որ կարելի է յառաջարանին ցըուած բեկորները ժողվելով, տրամարանական և պատմական կարգով մը յօրինել ամրող և անպակաս յառաջարան մը:

Ընթերցողներուն՝ յաջողութեանս վկայութիւնը տալ:

Ա. — Սկիզբն առաջին գրոց պատմութեան Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս, ի մահուն Արտեանայ յԱրտաշրէ յորդւոյ Սասանայ բռնատր Ստահրացւոյն . և զդարձ աշխարհիս Հայոց յանդիտութենէ կռապաշտութեան յաստուածդիտութեան նշմարտութիւն ի ձեռն սրբոյ Նահատակին Գրիգորիսի. յորոյ անուն և զգիրան անուանեալ կոչեն Գրիգորիսի:

Երկրորդ գրոց սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ առաջին գրոցն զիրս բազմափոփոխս աշխարհիս Հայոց, զբարեաց և զչարեաց, զվարս և զգործս զարանց սրբոց և զպղծոց,

զժամանակի պատերազմաց և զխաղազութեան։ Պատմեալ զյս ամենայն փոստոս ոմն Բուզանդացի, մինչև ցըթագաւորութիւնն Արշակայ (որդւոյ Պապայ, որդւոյ Արշակայ), որդւոյ Տիրանայ, առ որով թագաւորութեամբ բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատռեցաւ յերկուս ծուէնս, ըստ օրինակի հնացեալ ձորձոյ։

Եւ աւարտեալ աստանօր զբան պատմութեան իւրոյ՝ մնացուցեալ հանդոյց զոր անուանեալ կոչեն զանուն գրոցն Հայոց Պատմութիւն։

« Երրորդ պատմութիւնս այս ի կարգէ նորին գրոց շարադրեալ տըկարութեանս մերում։ յոր հարկաւորեալ հրամանաւ իշխանաց և բանիւսուրբ Վարդապետաց՝ տուաք զանձինս յայսպիսի գործ կարեոր, չիշխեցեալ ընդդիմանալ, յիշելով ի Ս. Գրոց զսպառնալիսն անհնազանդից որդւոցն, և զորս գրէ՝ ներողութիւն հնազանդից և հաւանելոց։ կարգել մի ըստ միոջէ զիրս և զգործս, զբազմայեզանակ դիպմունս Հայաստան աշխարհիս, բաժանմանց յերկուս թագաւորութիւնս։

Երկու թագաւորութեան բաժանումն ղը-  
նելէն վերջ, շատ տրամարանական էր որ  
Փարպեցին մասնականի իջնելով ըսէր թէ  
իշխաններէն ոմանց մնացին իրենց բնիկ  
տէրերուն (Արշակունեաց) ծառայութեան  
մէջ, ուրիշները օտար թագաւորներու լուծը  
ընտրեցին. մէկ խօսքով այն ամէնը որ  
պիտի կազմէր իւր պատմութեան էջերը<sup>1</sup>.  
հետևաբար

### Եջ 3 տող 22

կալ ոմանց ըստ աստուածային հրա-  
մանատարութեան ի հնագանդութիւնն  
բնիկ իւրեանց Արշակունի թագաւո-  
րացն և այլոց ծառայել կամաւ օտար  
թագաւորացն՝ ի կորուստ անձանց և  
աշխարհիս, որք ի միաբանելն տեսա-  
նէին զԱստուծոյ օգնականութիւնն  
յանձինս և յաշխարհս, և ի քակտելն  
և ի պառակտելն՝ զմխաս և զկորուստ  
յանձինս. և յաշխարհս<sup>2</sup>:

1. Փարպեցւոյ Գ. տպագրութիւնը Վե-  
նետիկ 1891. Նորայր և Պարոնեան անփո-  
փոխ կը պահեն այս գլուխը. Մատաթեան  
միայն ինձի հետ կը համաձայնի այս հա-  
տուածիս դասաւորութեան մէջ:

2. Նորայր պակաս մը կը դնէ այս տո-  
ղերէն վերջ. և կը շարունակէ Որում երկրորդ-  
գրոցն անուանն զոմն պատմագիր ևն:

Այս տեղաւորութենէ վերջ շատ աւելի  
յարմար կը կապակցի ընդհատութիւննիս

### Եջ 2 տող 7

Եւ ի վիճակէ բաժնոյ անօրինացն  
արանց քաջաց, ի տոհմէ նախարա-  
րացն Հայոց, տալ զանձինս անհամարս  
ի նահատակութիւնս ի վերայ ուխտին  
սուրբ եկեղեցւոյ և կիսոց համբերել  
կապանաց և բանդից վասն երկնա-  
ւոր յոյսոյն բազմաժամանակ տեղու-  
թեամբ. հեղուկ և քահանայից ըն-  
տրելոց Աստուծոյ և ծշմարտապէս հո-  
վուաց՝ զարիւն ի պարանոցաց իւ-  
րեանց ի վերայ ընտրեալ բանաւոր.  
Հօսին Քրիստոսի և ոմանց յընկե-  
րակցաց նախարարացն և յայլ ազատ  
մարդկանէ՝ դառնալ յետա յուխտէ  
սրբութեանն, և անշէջ յաւիտենից  
հրոյն լինել լուցկիք, պատրաստելոյն  
սատանայի և նորին արբանեկացն։  
Եւ գրել զայս ամենայն մինչև ցօր  
սկզբան Մարզպանութեան Հայոց Վա-  
հանայ Մամիկոնէից տեառն և մեծի  
զօրավարին Հայոց և Մարզպանի. և  
դադարեալ հանգուցից յայնմ տեղ-  
ոյջ զբան վաստակոց պատմութեանց  
այսոցիկ։

Բ. — Ըստ բաղում ճառս մատենից  
առաջնոցն պատմագրացն Հայոց անցի.  
յորոց ըստ յերկար ընթերցողութեան  
գոտի ի նոցանէ զժամանակաց և  
զդարուց աշխարհիս Հայոց բազմա-  
դիմի յեղափոխութիւնս, յստոյգ և  
յանսխալ կարգաւորութենէ Առաջին  
գրոցն, զոր յարմարապէս պատմեալ  
ծանոյց մեզ երանելին Ագաթանգե-  
ղոս, այր բանիբուն գիտութեամբ և  
լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան  
ի կարգադրութիւն ճառից և յարմա-  
րագիր ի պատմութիւնս ասացուածի  
իւրոյ:

Սա զնուազումն թագաւորութեան  
Արշակունուոյն Արտաւանայ և զզօրա-  
նալն Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ  
Սասանայ՝ ստուգապէս յօրինուածով  
կարգեալ դրոշմեաց, զքինքախնգրու-  
թիւնն խոսրովու և զտարակուսանս  
գոռոզացեալ Ստահրացւոյն . զխոր-  
հուրդն և զխոստունսն գտողի հնարս  
յաղագս մահուն խոսրովու, զխորա-  
մանկութեանն զմտածութիւնն Անա-  
կայ, և զսպանումն ի նմանէ զնորուն  
խոսրովու՝ նենգաւոր խարէութեամբ.  
զմատնումն յայնմհետէ զաշխարհիս  
Հայոց ի ձեռս թագաւորութեան ո-

տարի. զիախուցանել դայեկացն զոր-  
 դիս Խոսրովու յօտարութիւն առ ի  
 յապրումն. զհսկայաբար միւսանգամ  
 ղղարձն Տրդատայ և ղյաղթող մար-  
 տիւ ունելն զիւրոյին զնախնեացն քա-  
 ջաբար զթագաւորութիւնն. զդիմելն  
 առ նա սրբոյն Գրիգորի՝ զհեշտ պաշ-  
 տաման տենչիւ, զնահատակութիւն  
 նորին սրբոյն, և թէ որպէս տարաւ  
 անպատումն և անբաւ բազում չար-  
 չարանացն. զառաւելապէս օգնակա-  
 նութիւնն Քրիստոսի, որ ցուցաւ ի  
 վերայ սրբոյն ի հիացումն դեռևս մո-  
 լորեալ մարդկան. զհամբերութիւն  
 տեղութեանն այնչափ ամն ի վիրա-  
 պին, որ պահէր զնահատակն ի գործն  
 Հայոց . զեկս սուրբ կուսանացն ի  
 Հռովմայեցւոց քաղաքէն, և զհեղումն  
 մարտիրոսական արեանն ի Վաղար-  
 շապատ քաղաքի, յոռոգումն դալա-  
 րութեան գոսացելոց գիոց մարդկան.  
 զելն սրբոյն Գրիգորի ի խոր վիրա-  
 պէն, և զհանումն Հայաստան աշխար-  
 հիս ի խաւարէ անգիտութեանն յա-  
 տուածային արքայութեանն լոյս. ըզ-  
 յորդորումն յայնմհետէ վարդապետու-  
 թեան կենաց աշխարհիս Հայոց. զկը-  
 տակս մկրտութեան լուսոյ, զոր Փրկիչն

Քրիստոս ի ձեռն մեծի նահատակին  
Գրիգորի, բարեխօսութեամբ ևս սուրբ  
կուսանացն, ծաւալեցոյց յաշխարհիս  
մերում։ զշինութիւն եկեղեցեաց,  
զպայծառութիւն քահանայից ; ըդ-  
խումբս բազմամբոխ ժողովրդոց ի  
տօնս Փրկչին և ի ժողովմունս յիշատա-  
կաց սրբոց։ Զայս ամենայն ևս առաւել  
քան զսոյն գիտութիւն, յիւրում հաս-  
տատուն և անսխալ կարգաւորու-  
թիւնսն պատմեաց մեզ երանելի այրն  
Աստուծոյ սուրբն Ագաթանգեղոս<sup>1</sup>։

Որոշ կը տեսնուի որ Ա. գլուխը յին-  
քեան համառոտութիւն մ'է յաջորդ չորս  
գլուխներուն։ Երկրորդ գլխով կը սկսի  
ընդարձակել իւր գաղտնաբառն, մատենա-  
խօսութիւն մ'ընելով նախ իրմէ առաջ  
եղած ազգային երկու պատմագիրներուն  
վրայ, որոնց շարունակութիւնը պիտի  
զրէր ինքը. տալով անոնց պատմութեան  
նիւթին համառոտութիւն մը։ Այսպէս Բ.  
գլուխը Ագաթանգեղոսի նուիրուած է ինչ-  
պէս որ տեսանք. Գ. գլուխը բնականա-

1. Երկրորդ գլուխը ոչ մէկ բանասէրէ  
փոփոխութեան ենթարկուած է. ամբողջու-  
թիւն մ'է որ անայլայլ հասած է մեզի։

բար Բիւզանդի սահմանած պիտի ըլլար  
հետևաբար շատ հաւանական է որ սկսէր

### Էջ 3 տող 28<sup>1</sup>

Գ. — իսկ զհետ սորա որում եր-  
կրորդ գրոցն անուանեն զո՞մն պատ-  
մագիր, կոչեցեալ ֆոստոս Բուզան-  
դացի. և վասն զի կարգելոցն առ ի

1. Գ. տպագրութիւնը 1891 Վենետիկ  
կը սկսի նոյնպէս Գ. գլուխը Որում երկրորդ  
գրոցն և կը համաձայնի ինծի հետ մինչև  
հայեցողաց : Իսկ Բ. տպագրութիւնը փո-  
խանակ երրորդ գլույ, Դ. գլուխ կը դնէ,  
ամբողջ այդ կտորը, և կը փակէ գլուխը շա-  
րունակելով քանզի են ոմանք ի Յոյսս . . .  
յԱսորիս ասկից վերջ կը կցէ Եւ քաջքն . . .  
մինչեւ լաւանալ :

Տարբերութիւնը որ կայ Վենետիկի Բ. տը-  
պագրութեան 1873. և Գ. տպագրութեան  
մէջ՝ ետեւ առաջութիւնն է Գ. և Դ. գլուխ-  
ներու . ինչպէս և Ե. Մտաթեան կ' առա-  
ջարկէ Հանես Ամսօրեայի մէջ 1887 էջ 167.  
բաց ի քանի մը փոքր հատուածներու յա-  
ւելումներէ զոր ունի 1891 տպագրութիւնը :

Պարոնեան Ս. Վ. Բանասէրի մէջ Հա-  
տոր Ա. 1899 էջ 269 իւր ընթերցումը նոյն  
կը պահէ Ա. գլխոյն մէջ Վենետիկի Գ. տպա-  
գրութեան հետ (1891), Բ. գլուխը ևս կը  
շարունակէ նոյնպէս, միայն աւելցնելով հա-  
տուած մը Դ. գլխէն էջ 12 տող 20 բա-  
զումք սպրոցին գալ յայսպիսի մինչև ան-  
մըտացն շաղփաղիութիւնք :

նմանէ ի տեղիս ուրեք կարծեցին ու-  
մանք բանք ինչ ոչ յարմարք և դի-  
պողք, որպէս առաջնոյն ճշմարտու-  
թիւն, Ագաթանգեղոսն կոչեցելոյ՝  
յերկուացեալ հարկաւորեն չասել զայն-  
պիսի անպատշաճ կարգումն Բիւզան-  
դացւոյ ուսելոյ:

Քանզի Բիւզանդիոսս այս փոքրիկ  
քաղաքիկ էր, յառաջագոյն շինեալ  
յառնէ ումեմնէ Բիւզաս անուն կոչե-  
ցելոյ, մերձակայ Թրակացւոց սահ-  
մանակցութեան, զոր և ի գալն աս-  
տուածակամ հրամանով սրբոյն կոս-  
տանդիանոսի ի վերայ անթիւ բազմու-  
թեան Գթաց ի պատերազմ, և առ-  
եղերբն Ղեկովք գետոյ արարեալ զիւր  
զօրու բանակատեղս, որ և աստուածա-  
յին տեսչութեան լինէր արժանի, օրի-  
նակեալ նմա յայտնապէս յերկնից աս-  
տեղեայ լուսատեսիկ նշան կենսատու-  
խաշին բերելով շուրջ զինքեամբ ճա-  
ռագայթից նշանագիրս, թէ « այսու  
յաղթեսցես ». և նորա զարթուցեալ՝  
յուսով երևեցելոյ նմա սուրբ նշանին  
օգնականութեան, յաղթեալ վանէր  
զթշնամեացն բանակսն <sup>1</sup>, և խնդիր

1. Կորայր հոս ևս պակաս մը կը դնէ :

փութապէս գիւտիս այսմ հոգացեալ՝  
ճեպով զիւր մայրն զերանելին Հեղինէ  
յերուսաղէմ առաքէր:

Եւ թէ որպէս անդ ի ձեռն ջերմ  
խնդրոյ սրբոյ մարդոյն յայտնեցաւ  
կենաց փայտն՝ գիտէ ամենայն անձն,  
ի նորին գրոց տեղեկացեալ զգիւտ  
փրկութեան մերոյ:

Եւ ինքն թագաւորն եկեալ ի յա-  
ռաջագրեալ քաղաքիկն, որ անուա-  
նեալ կոչէր Բիւզանդիոս, և տեսեսալ  
զգանշելատեսիլ զամրութիւն տեղ-  
ոյն, թէպէտե ծանրագոյն և բազում  
աշխատութիւն ի տեղուժն ցուցանիւր՝  
ոչ ինչ վեհերէր վասն օգտակարու-  
թեան կղզւոյն. վասն զի շրջափակեալ  
յամենայն կողմանց ծովածիր էր տե-  
ղին, բայց խուն ինչ ցամաքայատակ  
ճանապարհ, առանց շրջագայութեան  
ջրոցն, որ ելանէր յարևմուտս կոյս  
քաղաքին:

Վաղվաղակի զձեռն ի գործ արկեալ  
տայր հրաման հարթել զբարձրա-  
բերձ զբլուրսն, որք ի ներքս ի կըդ-  
զւոյն էին, և շինեալ քաղաք մեծապայ-  
ծառ, զոր ըստ իւրում անուանակոչու-  
թեանն կոստանդնուպօլիս անուանէր,  
որ թարգմանի հայերէն կոստանդիա-

նոսի քաղաք։ զոր ոմանք ըստ հռով-  
 մայեցի բարբառոյն, պալատն ասեն,  
 որ թարգմանի արքունի։ իսկ որ յա-  
 ռաջակոյն շինեալ Բիւզանդիոսն էր,  
 էր թաղ մի յեզեր նորին քաղաքի որ  
 մինչև ցայսօր նորին անուամբ կոչի  
 Բիւզանդիա։ Եւ յայնմհետէ վտակք  
 գիտութեան, որպէս ի թագաւորա-  
 նիստ վայրի յորդեալ բղխեն ի քա-  
 ղաքէն որպէս և յամենայն կողմանց  
 յաշխարհէն Յունաց քաջ ուսեալքն  
 անդ փութան հանդիսանալ։ և մինչև  
 ցայսօր առաւելեալ տարածեն յամե-  
 նայն կողմանս նորա իմաստութեան  
 վտակք։ Այդ յայնպիսումն քաղաքի և  
 ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ  
 վարժեալ այլրն ֆաւստոս այնպիսի ինչ  
 արդեզք անհաճոյս լսողաց բանս կար-  
 գէ՞ր ի պատմութեան իւրում։ Քա՛ւ և  
 մի լիցի։ Ուստի և անհաւատալի ի-  
 մում տկարամտութեանս կարծեցեալ  
 գործն, ասեմ՝ թէ գուցէ այլ ոք յան-  
 դուգն և անհրահանգ բանիւ լրա-  
 բար ձեռն արկեալ յիւրն՝ գրեաց զինչ  
 պէտս ըստ կամի և կամ զի ուրուք  
 անկարեալ դիպողս՝ այլաբանեալ վնա-  
 սեաց, և անուամբ ֆաւստոսի զիւրոյ  
 յանդգնութեանն սխալանս համարե-

ցաւ ծածկել. և այն յայտնի ցուցանի  
ամենայն հայեցողաց<sup>1:</sup>

Փարպեցին հոս նշանակած կը թուի  
պարագայ մը յորում այդ «լիրր(երը)» և  
անհրահանգ բանիւները կրցած են յաջու-  
ղիլ իրենց « յանդնուրեանն սխարան »  
Փաւստոսի անուամբ ծածկել։ Հայաստանի  
խոռվեալ վիճակն էր անշուշտ

### Էջ 3 տող 19

(Քանզի) ըստ<sup>2</sup> այլայլման իրաց և  
ժամանակաց և դիպելոյ աշխարհիս  
Հայոց բաղմամբոխ դարուց, երբեմն  
խաղաղութեան և երբեմն սաստիկ  
ամբաւ շփոթմանց, միաբանութեան  
առ միմեանս և երկպառակութեամբ  
ճեխպելոյ ի միմեանց :

Պակսեցաւ այն հսկողութիւնը՝ որ մինչև  
վարդանանց պատերազմը ամէն իշխան կը

1. Մինչև հոս Վենետիկի Գ. տպագրու-  
թիւնը 1891 կը համաձայնի ինծի հետ։ և  
կը փակէ գլուխը քանզի Են ոմանք ի յոյնս  
այլ մանաւանդ առաւել յԱսորիս։

2. Գ. տպագրութիւնը հոս կը սկսի Գ.  
գլուխը աւելցնելով իսկ զիետ սորա՝ ըստ  
այլայլման . . . :

կատարէր իւր սահմանները, ինչպէս որ ազգային պատմութիւնը կ' աւանդէ, չի թողլով ոչ մէկ աղանդաւորի ոտք կոխել Լուսաւորչայ փարախին մէջ. այդ հսկողութեան պակասութեամբ՝

### Եջ 5 տող 1

**բազումք սպրդեցին գալ յայսպիսի  
յայրատութիւնս :**

Փարպեցւոյ ծանօթ անձինքներ էին այն գրանենգները, թէպէտե օտարազգի, բայց համբաւնին ելած կը թուի, այս պատճառաւ և լոկ ակնարկութեամբ մը կը բաւականանայ պատմագիրը. քանի որ ամէն «հայեցողաց» ալ յայտնի էր: Եւ որոշ անոնց ազգութիւնը կը նշանակէ .

### Եջ 4 տող 36

**քանզի են ոմանք ի Յոյնս այլ մանաւանդ առաւել յԱսորիս.**

1. Գ. տպագրութիւն ասկից վերջ կը շարունակէ արք տգէտք և կը համաձայնի մինչև շաղփաղփութիւնք յորմէ վերջ կը շարունակէ Որում արթնամիտ խորիլովականութեամբ:

**Անոնց գիտութեան չափը և գրութեանց  
տեսակն ևս կը ճանչնայ**

**Էջ 5 տող 2**

արք տգէտք և յանդգունք գրեցին  
յինքեանց ճառա ընդունայնս և անպի-  
տանաբանս և խառնեալ եղին ի գիրս  
գիտուն լսողաց. այլ ընտրող մտաց  
ճանաշի գիտնոցն բանք և անմտացն  
շաղփաղփութիւնք:

Այս գրանենգներու նպատակը զուտ  
կրօնական էր. Յոյնը և Ասորին, ներ-  
կայացուցիչներ էին ժամանակին երկու  
մեծ դպրոցներուն Աղեքսանդրիայի և Ան-  
տիոքի, որոնք կը մրցէին իրարու հակա-  
ռակ ընդլայնելու իրենց իրաւասական շըր-  
ջանակը, երբեմն աղանդաւորներու պաշտ-  
պան ալ հանդիսանալով : Փարպեցւոյն  
յաջորդ պարբերութեան մէջ ըրած ակ-  
նարկութիւններէն կը հասկցուի թէ գրա-  
նենգներու նպատակն էր խախտել Ա. Եր-  
րորդութեան վարդապետութիւնը. Դ և Ե  
դարերու աստուածաբանական և քրիստո-  
սաբանական մեծ խնդիրը: Պատմիչը՝ իւր-  
ուղղափառ դաւանութեամբ պատմագրելու  
ուրախութիւնը՝ հակաղբութեան կը դնէ  
այն անպիտան շաղփաղփողներուն հետ,

որ ամէն նեղութիւն և վիշտ յանձն կ'առանուն միայն թէ «հասեալ խնդրոյն տենչչիցն... բերկրեալ զուարճանան» . որչափ ևս առաւել ինքը իրաւունք ունէր ցնծալու:

### Եջ 6 տող 11

Եւ արդ՝ յահագին այսպիսի մահուս զերծեալ անձինք շահաժողով ընչասիրացն և հասեալք եեթ խնդրոյն տենչչիցն, որում ուշ արարեալ բաղձան. մոռացեալ զվիշտսն՝ բերկրեալ օգտիւքն զուարճանան: Իսկ ո՞րչափ ևս առաւել գտանիցին գանձուն յաւիտենից ժառանգաւորք որք և զյօրինուածս բանից ստուգապատում կարգեալ պատմագրեցին, չառնել մարդահաճութեան բանից յաւելուածս, ի ցրումն ոսկերաց, ըստ ասացածի սաղմոսերգին, այլ զգուշական երկիւղիւն ընդ բազմաց լայնածաւալս գիտնական բանինաւեցին անվըթար, ի սուրբ Հոգւոյն շնորհսն յուսով ապաւինեալք. ունելով փոխանակ փայտամած տախտակացն՝ զհիմն ուղղափառ հաւատոյ և փոխանակ ի նմա բազմայարմար կազմութեանն հնարիցն՝ զերրեակ ինքնութեանն: Եւ զի նաւացն տախտակք

առանց բազմաց սատարելոյ չհընարին լինել յանօթ պիտանացու, քանի ևս առաւել այսպիսի մեծ և հոգեսոր դործոյ ձեռնարկութիւն, ուր բազում կարեսոր պէտք էին առաքինի արանց օգնականութեան :

Այդ առաքինի մարդն էր Վահան Մամիկոնեան իշխանը որուն հովանաւորութեան տակ՝ Փարպեցին սիրտ ըրաւ շարադրելու իւր պատմութիւնը.

### Էջ 5 տող 6

Դ. — Որում<sup>1</sup> արթնամիտ խորհըրդականութեամբ ուշադրեալ այսմ ամենայնի մտաւոր և քաջ այրն Վահան տէրն Մամիկոնէից, զօրավարն Հայոց և մարզպանն, որ բազում և

1. Պարոնեան կը սկսի Դ. գլուխը Գ. տպագրի համաձայն մինչև տող 20 էջ 12 իսկ զիետ սորա և կը շարունակէ էջ 15 տող 21 կալ ումանց մինչև յանձինս Եւ յաշխարհս և կը դառնայ էջ 13 տող 5 Որում արթնամիտ մինչև էջ 14 տող 6 ճգնութեանց նոցա, յորմէ վերջ կը դնէ էջ 16 տող 10 Եւ քաջք լսելով... մինչեւ լաւանալ:

անհամար ուղղութեանց աշխարհիս  
Հայոց ի ժամանակս իշխանութեան  
իւրոյ եղեւ արարող, անձամբ և զայլս  
յորդորելով զբազումն : Այս որպէս  
և այլ ամենայն բարոյ իրօք հոգա-  
ցեալ զհայաստան աշխարհի իրս ա-  
ռաւել և զայս ի դէպ և պատշաճ հա-  
մարեցաւ ի մնացեալ տեղոյ պատ-  
մութեան Երկրորդ գրոցն աճեցու-  
ցանել յառաջ և գրել յայնմհետէ զե-  
ղեալս յաշխարհիս Հայոց : Բազում  
զգուշութեամբ գրել և կարգել մի ըստ  
միոջէ զամենայն զհոգեորացն զառա-  
քինութիւնս և զարանց քաջաց զլա-  
ւութիւնն : Որպէս զի զհոգեորացն  
զբարի վարսն լուեալ բազմութեան  
ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկաս-  
ցին մարդիկ ճգնութեանց նոցա,

Այդ առաջադրած սրբակեաց մարդիկ-  
ներու առաջինութիւնները նկարագրած ա-  
տեն նպատակն էր որ ժողովուրդը անոնց  
ճգնութեանց հետեւելու փոյթ տանէր, այս  
բանս, միջոց մ'էր իրենց մէջէն չարութեան  
եռանդը մարելու<sup>1</sup>

1. Ե. Մատաթեան այստեղ կը համա-  
ձայնի ինծի հետ մինչև ողորմի փութով :

### Եջ 6 տող 7

և պարտեալ եռանդեանն չարութիւնն անդէն և անդ դադարեալ ցածնուն<sup>1</sup>.

Հոգեոր մարդէն վերջ պիտի նկարագրէ « զարանց քաջաց զլաւուրիւն » , քաջալերելու համար քաջերը և օրինակ տալու ծոյլերուն

### Եջ 5 տող 17

և քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց՝ անձանց և ազգի. իսկ ծոյլքն և վատքն հայելով յանձինս և լսելով զայլոց ըզ-

1. Գ. տպագրութիւնը մինչև հոս կը համաձայնի ինձ, որմէ վերջ կը յաւելու. Այսպէս եւ բան հզօրին Աստուծոյ . . . մինչև ողորմի փութով։ Եւ կը շարունակէ Եւ արդ յահագին այսպիսի մահուս մինչև առաքինի արանց օգնականութեան յորմէ վերջ կը դնէ կալ ոմանց ըստ Աստուածային հրամանատութեան մինչև յանձինս եւ յաշխարհի։ Կը գոցէ գլուխը աւելցնելով Եւ քաջք լսելով մինչև լաւանալ։

պարսաւանս ի բարի նախանձն կըք-  
թեալք ջանասցին լաւանալ:

Կը հանէ և բարոյական մը:

### Եջ 6. տող 8

Այսպէս և բան հզօրին Աստուծոյ  
վճարէ զամենայն զոր կամի. ցասու-  
ցեալ ըստ չարի մեր գործոց՝ խրատէ  
ողոքեալ. զբարի դարձ(եալ) տեսանե-  
լով՝ ողորմի փութով:

Ասկից ետք վերջաբանը կը սկսի նոր  
գլխով մը, ուր Փարապեցին մեզի կու տայ-  
իւր ինքնակենսագրութեան դրուագ մը.  
այսինքն՝ որուն քով աշակերտած ըլլալն,  
որ բարոյական մեծ նշանակութիւն մը կը-  
թուի ունենալ. երկրորդ՝ Վահան Մամի-  
կոնեանէն պատմագրելու ստիպողական  
հրաման ստանալը. երրորդ աւանդական-  
կարգ մը խոնարհաբանութիւններ, իւր զի-  
տութիւնը անբաւական համարելով, նիւ-  
թին դժուարութիւնը ցուցադրելով, վեր-  
ջապէս՝ զիջումը, Աստուծոյ օգնականու-  
թեան վրայ յոյսը դնելով։ Այսպէս

## Էջ 5 տող 22

Ե. — Հստ այսմ օրինակի զգուշացեալ ստիպեցուցանէ զմեզ տէրն Մամիկոնէից Վահան, զօրավարն Հայոց և մարզպան. որոյ հասեալ հրաման առ իս Ղազար ֆարապեցի, որ և սնեալ և ուսեալ առ ուսա առաքինակրօն երանելոյն Աղանայ, որ էր ազգաւի հոյակապ և յականաւոր տոհմէն Արծրունեաց, որդի Վասակայ, եղբօր Տաճատայ և Գոտորզի. Որ մինչդեռ էր ի տիս մանկութեանն, և այն ինչ

1. Բ. և Գ. տպագրութեանը և Ե. Մատաթեան ինծի նման կը կարդան՝ Ե. գլուխը: Իսկ Պարունեան Ե. գլուխը կը կազմէ այսպէս. Գ. տպագրի էջ 19 տող 2. Զի ոչ փոքր ինչ մինչև տող 17 ի յայտնութիւն. և կը շարունակէ էջ 16 Ե. գլուխը ճիշտ այնպէս մինչև 19 երես տող 2 զի ոչ էր քան զբան որմէ վերջ դատարկութիւն մը դնէ՝ պակասին մնացորդները ենթադրելով հետեւեալ հատուածները էջ 14 տող 22 Եւ զյօրինուածս բանից ... մինչև էջ 15 տող 3 սաղմոսերգուին շարունակելով էջ 14 տող 6 Եւ պարտեալ մինչև տող 22 ողորմի փութով շարունակելով էջ 15 տող 4 զգուշական երկիւլիւ տող 21 օգնականութեան և կը փակէ գլուխը էջ 19 տող 18 Եւ վան զի են աստ պէտք ևն:

դեռ տէգ մուրուացն ի վերայ գեղեց-  
կատեսիլ վարդափթիթ ծնօտիցն բու-  
սանէր՝ ի բաց ընկեցեալ արհամար-  
հէր զամենայն վայելս անցաւոր կեն-  
ցաղոյս, և զերկնաթոիչ զճանապար-  
հէն յաւիտենից բարութեանցն ըն-  
տրեալ հետեխւր, կեցեալ յանապատս  
ընդ արս ընտիրս ի ճգնութիւնս մե-  
ծամեծս։ Զորոյ և ոչ բաւական ոք է  
բանիւ բովանդակել զանբաւ վարուցն  
զառն նահատակութիւնն. այլ այսքան  
միայն ասացեալ մնացուացուք զբանս,  
որպէս թէ պատճառանօք գոլով ի  
մարմնի՝ տքնութեամբ և պահօք և ան-  
դադար աղօթիւք զանմարմնոցն զվե-  
րին զօրացն բերէր յանձին զքաղա-  
քավարութիւն, որ ոչ երբէք ի կեանս  
իւրում ընտրեաց ժամ աղօթից, այլ  
զտիւ և զգիշեր անհանգիստ նմա ժամ  
աղօթից էր։

Եւ կեցեալ այսպէս, մինչև առաւե-  
լեալ ծաղկէր հեր դլխոյն սպիտակն  
քան զխարտէշն, և կատարեալ զըն-  
թացս նահատակութեան իւրոյ՝ հանգ-  
չէր։ Եւ եղեալ ի մատրանն ի յԱղա-  
մակերտի. որոյ յիշատակարանն ընդ  
անուանս վկայիցն սըբոց պատմեալ  
քարոզի մինչև ցայսօր և յաւիտեան,

անուն սրբոյն յամենայն Եկեղեցիս  
Հայաստանի աշխարհիս, Վրաց և Ա-  
ղուանից։ Եւ արդ՝ այսպէս հարկա-  
ւորեալ բռնադատեաց զտկարութիւնս  
մեր տէրն Մամիկոնէից վահան, սպա-  
րապետն Հայոց և մարզպան, ձեռ-  
նարկել ի գործ՝ որ ի վեր քան զկար  
գիտութեան մերոյ էր. քանզի ոչ էր  
քան զբան,

Հոս բնագիրս<sup>1</sup> պակաս մը կ'ենթազրէ  
այդ անիմաստ վերջին շարք մը բառերուն  
համար. մինչդեռ՝ ըստ իս՝ աղաւաղութիւն  
մը համարելու ենք յաջորդ դրած տողե-  
րուս որ եթէ զեղջուին բնագրէն առանց  
իմաստին պակասութիւն մը տալու ուղ-  
ղակի կը շարունակեն հեղինակին ըսելիքը

### Էջ 6 տող 25


**Զի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներ-  
կիւղ այսպէս ումեք տալ զանձն յայս-**

1. Տփղիս 1904 էջ 6 ի ծանօթութեան կը  
համարին որ ենթադրած պակասած մատում,  
Դ. Փարսկեցին, հետևեղով Ազարանզեղոսի  
յառաջարանին՝ նմանեցնում է մատենագրի  
վիճակը ծովային վաճառականի վտանգալից  
վիճակին մինչդեռ իմ ներկայ դասաւորու-  
թեան համաձայն Փարսկեցին հեռի է այդ  
տեսակ փոխառեալ նկարագիրներ ընելու։

պիսի վաստակս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց. չյաւելուզ զանեղեալսն՝ յընդունայն աճմունս բանից. չնուազեցուցանել զեղեալսն և կարճակտուր պատմել, բանիւք անփութութեամբ. այլ զբնաւն ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն:

Եւ վասն զի են աստ պէտք բազում երկիւղագին պատրաստութեան<sup>1</sup>, արդնպաստեալ իմում տկար խորհրդոյս, աղաչեմ սատարեցէք ամենայն աղօթասէր անձինք, ձերովք առ Աստուած խնդրուածովք օգնականութեամբք. որովք արդարապատումն ծշգրտաբանեալ՝ զեղեալ ի վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն, ընդ յորձանս մեծապատումն ծաւալացանաւեալ մըտաւոր ստուգաբանութեամբ, հասից բարեխօսութեամբ. սրբոց յանալէկոծ և յապահով նաւահանգիստն:

1. Նորայր հոս պակաս մը կ'ենթադրէ:




## Օրինեալ է Աստուած

Այսպէս իմ նոր ընթիրցման դասաւութեան համեմատ Ղազար Փարպեցւոյ պատմութեան յառաջաբանը կը բաժնուի աւանդական հինգ գլուխներու:

Առաջին գլուխը յինքեան համառոտութիւն մ'է ամբողջ յառաջաբանին<sup>1</sup> որուն ընդարձակութիւնը կը սկսի Երկրորդ գլուխով՝ որ նուիրուած է ազգային առաջին պատմիչ Ագաթանգեղոսին որուն պատմութեան համառօտ բովանդակութիւնը կուտայ մեզի: Երրորդ գլուխը Բուզանդի ջաագովութիւնն է և գրանենգ Յոյն և Ասորիներու պարսաւանք մը: Չորրորդ գլուխոյն մէջ կը պարզէ իւր գրելիք պատմութեան ծրագիրը, Վահան Մամիկոնեանի փափաքին համեմատ: Հինգերորդ գլուխը վերջաբանն է, ուր կը ստանանք հեղինակին և անոր վարդապետին կենսագրութեան քանի մը նօթեր, ասոնցմէ վերջ կը սկսի բացատրել ձեռնարկելիք գործին

1. Տես Բանասէր, Հատոր Ա. էջ 272 կրկին յառաջաբանկը Փարպեցւոյն. Սուֆիաս Վ. Պարոնեան:

անհամար դժուարութիւնները, ցուցնելով  
իւր գիտութեան պակասութիւնը : Վեր-  
ջապէս յանձն կ'առնու միայն՝ որովհետեւ,  
Հայոց իշխանին ստիպումը կը բռնադատէ  
զի՞նքը, և զործի կը սկսի Աստուծոյ շնոր-  
հաց ապաւինելով :



UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04146 7047